Ժէ. ՏԱՐԻ ԹԻՒ 4254 — ՓԵՏՐՈՒԱՐ 22/6 ՄԱՐՏ 1900 — ԵՐԵՔՇԱԲԹԻ — 5 ԶԻԼԳԱՏԷ 1317 — Ժէ. ՏԱՐԻ ԹԻՒ 4254

درعلیه غلطه ده (آره‌ویلك) غزته‌سی اداره‌خانه‌سنده

ՊՈԼԻՍ, Գալաթիա, Նորատունկեանց խան

Les annonces sont reçues à la Direction du Journal "AREVELK" Galata, CONSTANTINOPLE.

Նամակ կամ որեւէ գրութիւն պէտք է ուղղել ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառներու համար տարեկան. 140 Ղրշ.
» » » » վեցամսեայ. 70 »
» » » » եռամսեայ. 40 »
Օտար երկիրներու համար տարեկան. 40 Ֆր.
» » » » վեցամսեայ. 20 »
Դրամի փոխարէն Փոստալի փուլ կ'ընդունուի, 115 դրուշի փուլը 100 դրուշի հաշուով:
Տեղական գրաստարի դիմաց բաժանորդներուն կը վերադրի:
Մանուկներու համար պէտք է դիմել ուղղակի խմբագրատուն:

20 ՓԱՐԱ

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԻԱԲԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տակաւին չաւարտած սուգը՝ վախճանմամբ Տ. Երեմիա Աւ.քեպիսկոպոսի՝ որուն քառանօրեայ հանդիսական եւ կեղեցական արարողութիւններն ալ տակաւին չեն կատարուած, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը նոր սուգով մը կը համակուի այսօր կորանցնելով իր մէջէն վաղեմի Միաբանակից մը Տ. Աստուածատուր Եպիսկոպոս՝ որ ի Տէր հանգեաւ այս առաւօտ արշալուսէն շատ առաջ, եօթանասուն տարեկան հասակին մէջ։

Անողոք հիւանդութիւն մը սրտի որ երկու տարիէ ի վեր կը տառապեցնէր հանգուցեալ Սրբազանը, այս վերջին երկու երեք ամիսներուն մէջ աւելի ծանրանալով յառաջ բերաւ ուրիշ հիւանդութիւններ՝ որ մոցելով բժշկական ամէն խնամատարութիւններու դէմ, ի դերեւ հանեցին ամէն ջանք և զրաւեցին, դժբաղդաբար, իր կեանքէն անձ մը որ դեռ եւս կրնար օգտակար ըլլալ այս մեծ հաստատութեան։

Ինկ Խարբերդցի էր Տ. Աստուածատուր Եպիսկոպոս, Բէսրիկ գիւղէն և, առաջնորդութեամբ իր հայրենակից Սրբազանին՝ հանգուցեալ Տ. Երեմիա Արքեպիսկոպոսին՝ ընդունուած էր Միաբան Ս. Աթոռոյս 1852 թուականին որ ատեն 22 տարեկան էր տակաւին։ Հոգեշոյս Տ. Յովհաննէս Պատրիարքէն ընդունած է կուսակրօն քահանայութեան կարգը և վարդապետական աստիճանը 1857ին, և, ամբողջ 19 երկար տարիներ իր ձեռնադրութենէն ետքը ոչ նուազ ծառայութիւններ մատուցած է Ս. Աթոռոյ և Միաբանութեան՝ թէ՛ զանազան տեսչական պաշտօններով և թէ՛ մանաւանդ Դահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ՝ իբրեւ տեսուչ վանքապատական կալուածներու։

Ձեռնադրուած է եպիսկոպոս՝ 1876 ին, երջանկայիշատակ Տ. Դէորդ Կաթողիկոսէն, ընկեր ունենալով իրեն Տ. Ներսէս Սրբազան Դէորդեան՝ միաբան Ս. Ուխտիս՝ (այն ատեն Թէքիրտաղի Առաջնորդ, այժմ Նորընտիր Պատր. Փոխանորդ) և 14 տարիներ ամբասիր վարած է իր եպիսկոպոսական բարձր կոչումը առաջի Ս. Սեղանոյն Աստուծոյ։

Պատկառելի ըլլալէ աւելի ծանրաբարոյ՝ Տ. Աստուածատուր Եպիսկոպոս չէր այնքան համակրելի՝ որքան նախանձախնդիր էր Հայ. Եկեղեցւոյ արարողութեանց և ծէսերուն, մանաւանդ վանքապատկան իրաւանց, Ս. Աթոռոյ իրաւասութեանց ու Ս. Տեղեաց խնդիրներուն մէջ։

Իր անձնական հարստութենէն աւելի իր բնական ուշիմութիւնը մասնակի դիրք մը ընծայած էր իրեն՝ ամբողջ միաբանութեան մէջ և իր առտիճանակից եւ միաբանակից եղբարց հետ տեսակցելէ աւելի կը սիրէր կարդալ ու գրել։

Իր այդ ուշիմութեամբն էր որ բաւական յառաջդիմութիւն ունեցած էր, գրեթէ ինքնօրնութեամբ, հայերէն, արաբերէն, թուրքերէն ու ֆրանսերէն լեզուներու մէջ որոնցմով իսկ օգտակար եղած է զանազան առիթներով։

Գրած է պարզ գրաբառ լեզուով հատոր մը «Պատմութիւն Երուսաղէմի» ուր թէպէտ քիչ մը ճապաղ, ամփոփուած են սկիզբէն մինչեւ հոգելոյս Տ. Եսայի Պատրիարքի ընտրութիւնը՝ այն ամէն գործառնութիւնները որ տեղի ունեցեր են Հայ, Յոյն ու Լատին ազգերու միջեւ եւ լուսաբանուած ինչ որ մինչեւ ցայսվայր մութի կը մնար հայ ժողովրդեան՝ ի վեր հանելով Ս. Յակոբայ Վանուց տեսած բազմազան շնորհներն ու ստացած հրովարտակները բարեյիշատակ Սուլթաններէն Օսմանեան փառապանծ Պետութեան։

Հանգուցեալ Ս բաղանը թերեւս ունենայ անտիպ գրութիւններ կամ թարգմանութիւններ ալ որ ի հարկէ ի յայտ կու գան քիչ յետոյ, բայց այժմ անծանօթ կը մնան մեզ։

Այսօր ժամը 3ին (Ր. Թ.) Ս. Պատարագի ատեն հանդիսաւորութեամբ ու փղձկեալ սրտիւ կատարեց հանգուցեալ Սրբազանին օծման արարողութիւնը Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրը որ քիչ մը անձնական տկարութիւն ունենալով հանդերձ, բարեհաճեր էր Պատ. Միաբանութեան բազմաչարչար աշխատաւոր եպիսկոպոսի մը հանգստեան այս տարուր հանդէսը իր ներկայութեամբը պատուելու և մխիթարելու թէ՛ Միաբանական Դասը և թէ ժողովուրդը որ խմբուած էր։

Բացատրելով Տ. Աստուածատուր Սրբազանի մատուցած ծառայութիւնները, հեղձամղձուկ դամբանական մը խօսեցաւ Ն. Սրբազանութիւնը՝ աւելի՛ ազդուած Տ. Երեմիա Սրբազանի վախճանումէն քիչ յետոյ՝ յաջորդ սուգի մը վերարերումէն որուն տպաւորութիւնը աւելի ծանր կը կշռէ վանական շրջանակի մէջ։

Յուզարկաւորութեան հանդէսին որ կատարուեցաւ միջօրէին, կը նախագահէր Տ. Ներսէս Սրբազան՝ Պատրիարքական Փոխանորդը, և հանգուցեալ մարմինը չուրով ու հանդիսիւ առաջնորդուեցաւ Ս. Փրկչի գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ սովորական արարողութեամբ քահանայական աստիճանի։

Երուսաղէմ, 10 Փետր. ՎՐՈՅԹ

ՈՒՐՖԱՅԻ ԳՈՐԾԵՐ

(Թղթակցութիւն «Արեւելքի»)

Նպաստներու գործը — Հայ դեղագործներ. — Սանասարեան վարժարան — Խմբագիներու կեանքին — «Ցեռ»ի գին եւ Օրոգսի Պագ Ընկ.։

ՈՒՐՖԱ, 6 փետր. 1900.

Քանի կը յառջանայ ձմեռը՝ հոս այնքա՛ն խնդրելի կը դառնան արմտիք. ասկիա գրեթէ ամէն տարուան սովորական երեւոյթ մը՝ է քաղաքիս համար, որ չունի դուրսերէն սպասելիք. կ'ապրի միայն գաւառիս հողագործական արդիւնքներէն։

Արմտեաց նուազութեան ներկայ ժամանակամիջոցին մէջ՝ կարօտեալ ընտանիքներու համար՝ ամէնէն կենսականը՝ հացի պիտոյքը ուշադրութեան առնելով՝ Առաջնորդարանը փութացած է Աղքատախնամ յատուկ Հոգաբարձութեան մը միջոցաւ ցորենի վերածել, վերջերս Պատրիարքարանէ յանուն կարօտելոց ղրկուած նպաստից գումարը։ Ցորենի առաջին նպաստաբաժինները՝ կարօտելոց պիտի բաշխուին Մեծ Բարեկենդանին առթիւ, որ մօտալուտ է արդէն։

Պատրիարքարանի այս նպաստին հանդէպ՝ տեղւոյս ամերիկեան Միսիոնարութեան կողմէն ալ 50 լիրայի գումար մը յատկացուեցաւ նպաստի գործին։ Եւ որովհետեւ նոյն Միսիոնարութեան կողմէն՝ այս կարգի հանրային գործերու մէջ Առաջնորդարանի հետ համաձայնութեամբ ընթանալու գովելի դրութեան միշտ նախապատուութիւն տրուած է, բացակայ Միսիոնարուհիին՝ Միս Դօրինա Շաթբզի տեղակալներէն Միս Զէմպլբս Հայ Բողոքականաց աղքատախնամներուն հետ՝ անցեալ շաբթու Առաջնորդարան գալով բանակցեցաւ Առաջ. Տեղապահին հետ, և որոշուեցաւ նպաստներու մասին Առաջնորդարանէ առաջարկուած տեսակէտին համեմատ կատարել բաշխումը։

* * *

Քաղաքիս մէջ դեղագործութիւնը շատ տարիներէ ի վեր գրեթէ հայերու յատուկ ասպարէզ մը եղած է. բայց հայ դեղագործներէ ոմանց վախճանելուն հետեւանքով՝ քանի մը տարիէ ի վեր՝ ուրիշներ բռնած էին այդ ասպարէզը։ Գոհութեամբ կը ծանուցանենք թէ տեղւոյս Քաղաքային բժշկին, Տոքթ. Սալվաթորի ուղղակիր քաջալերութեան շնորհիւ՝ դեղագործութեան կարեւոր զբաղումը այս անգամ դարձեալ տեղացի հայերու վիճակեցաւ, որոնց գլխաւորներն են Սարգիս էֆ. Վիրաբուժեան և Սողոմոն էֆ. (դեռ մօտերս վիլայեթի ստացած Կ. Պոլսոյ Բժշկական ժողովէն). կը յուսանք որ խղճամիտ ու պատուաւոր գործունէութեան մասին՝ հասարակութեան կողմէ իրենց վրայ դրուած յոյսը պիտի արդարացնեն։

* * *

Որբախնամներու մարդասիրական նպաստին շնորհիւ՝ վերջին երկու տարուան մէջ քաղաքիս ևս 4 ծրիավարժ որբ ուսանողներ ընդունուած են Սանասարեան վարժարանը։ Երդրումէն առնուած լուրերուն նայելով՝ հիմայ այն կրթարանին մէջ հինէն աւելի կարեւորութիւն կը տրուի եղեր գերմաներէնի ուսուցման, ինչ որ գոհութեան արժանի պարագայ մըն է անշուշտ՝ նկատելով հետզհետէ նոյն լեզուին առնելիք կարեւորութիւնը՝ առեւտրական աշխարհին մէջ։

Կիմանանք՝ որ սեղւոյս Գերման որբախնամներէն Օր. Փաթրանքի գերմաներէնի ուսուցման պարագան իմանալով, քաջալերելու մտօք այս անգամ գերմաներէն Բառգիրք մը ընծայ ղրկած է Սանասարեանցի եղեսցի ուսանողներէ մէկուն, զոր պատեհութիւն ունեցած էր ճանչնալ նոյն կրթարանը զրկուելէն առաջ։

* * *

Օտար երիտասարդ մը, որուն ցեղակիցներուն մէջ ալբօլամոլութիւնը հսկայաքայլ յառաջ դիմելու վրայ է, այս օրերս, խմաններու շրջանի մը մէջ գտնուած պահուն՝ գրաւ կը դէզ արծաթ մեդիս մը... կուլ տալու մասին և մեծ ծիծաղով կը յաջողի ալ։

Առաջին սթափումէն ետքը կը սկսի խիթեր զգալ կուրծքին տակեն, որոնցմէ ազատելու համար՝ հիմակ ճարը բժիշկներուն ձգած է։ Պիտի կրնա՞ ազատիլ իր յիմարական փորձին հետեւանքէն — իրաւ որ չենք գիտեր։ բայց երանի թէ այս պատահարը խրատ մը ըլլար անոնց՝ որոնք «գործ կ'ընեն»... օղիի չիչերուն հետ։

* * *

Վերջերս Պոլսական թերթերը գրած էին թէ Օրոզտի Պագ Ընկերութիւնը, փէսի գնոյն վրայ նոր յաւելում մը ալ ըրած է, առարկելով թէ Սպանիոյ մէջ շատ ոչխարներ փճացած ըլլալուն բուրդի գինը բարձր է առջինէն։

Գաւառիս բնիկներուն կողմէ, որոնք ընդհանրապէս իրենց փէս գործածողներ իրենք ալ վնասի բաժին մը ունեցած են «շնորհիւ» նոյն Ընկերութեան՝ ժամանակէ մը ի վեր փէսի գնոյն զգալապէս բարձրանալէն, անպատեհ չպիտի ըլլար կարծենք յիշեցնել՝ թէ երբ ոչխարհի այս կամ այն կողմը բուրդի գնոյն աւորեայ իլնալ-ելլերեն այնչափ շուտ պիտի ազդուի մեր անկաժեշտ մէկ պէտքին՝ փէսերու սակը, ուղղակիս և կամ «անկողմնակալ» ըլլալու համար՝ Օրոզտի Պագ Ընկերութիւնը պէտք է հաճի նկատողութեան առնել նաեւ Թուրքիոյ գաւառներու բուրդի մթերանոցներուն վիճակը, ուր իր սովորական գինէն 45 հարիւրին իսկած, երկու տարիէ ի վեր ցեցի կեր կ'ըլլայ ընտիր եաբաղը։ Գաւառիս մասին միայն չէ որ կը խօսինք։ Մինչեւ ցայսօր բոլոր սահմանին մէջ—որ բրդաշատ միջավայրերէն է,—բուրդի գնոյն վրայ նոյն անկումն է որ կը նշմարուի ժամանակէ մը ի վեր։ Եթէ վերջերս Սէլանիկի մէջ կազմուած կամ համանպատակ փէսի գործով զբաղելու կոչուած ուրիշ ներքին Ընկերութիւնք օգնութեան չհասնին, կ'երեւի թէ Օրոզտի Պագ Ընկերութիւնը հետզհետէ պիտի փորձէ գնոյ նոր յաւելումներ ընել փէսի վրայ։

Գ. Կ. Ռ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ ՈՐԴԻ

ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՐԴԻ ԹԱՏՐՈՆԸ

Այս օրերս, Բարիզի Գոմէտի Ֆրանսէզ թատրոնը իր ներկայացումներու շարքին մէջ անցուց Տիան տը Լիսը, առաջին գործերէն մէկը Ֆրանսացի նշանաւոր թատերագիր Ալեքսանդր Տիւմա Որդիին՝ որ քիչ մը մոռցուած կը մնար իր մահուընէն ի վեր։ Սակայն հակառակ այդ մոռացման, Տիւմա կը շարունակէ մեծ ազդեցութիւն ունենալ՝ որ ոչ միայն թատերական արդի թատրոնին վրայ, և այլ եւ այլ բեմերու վրայ ներկայացուած խաղերը առաւել կամ նուազ մէյ մէկ դրոյմ կը կրեն իրմէ։ Ոչ ոք կրնայ մոքէն հանել Տիւմայի խաղացած դերը. և այս պատճառաւ է որ դեռ հազիւ քանի մը տարի առաջ մեռած ըլլալուն հակառակ, արդէն իսկ դասական հեղինակ մը սկսակ է նկատուիլ։ Տիւման յատկանշող գլխաւոր յատկութիւնը սա է որ, հետեւող մը չեղաւ բաւ. ընդհակառակը ինք բարեփոխեց թատերգութիւնը, հաստատելով pièce à thèseը որ ուրիշ բան չէ, եթէ ոչ տրամախօսական ուսումնասիրութիւնը ո՛ և է ժամանակակից եղելութեան մը, որուն մէջ կը գտնուին նաև ժամանակակից անձնաւորութեանց պատկերացումներ։ Մէկ խօսքով, Տիւրոյի տեսութիւններուն արդի միջակարգաւոր կեանքին մէջ կիրառութիւնը՝ առանց պատմական արդուզարդի եւ քնարերգական ճոռոմաբանութեան։ Տիւմա՝ իր գործերուն mise en scèneին մէջ պահանջած խստութիւններով կ'ուզէր տեղական գոյն մը տալ իր թատերգութեանց. իսկ այն երկար tiradeները՝ զորս իր բոլոր գործերուն մէջ տրամախօսող անձը մէկ չուչկով կ'արտասանէ, նոր են դարձեալ և հիմնովին կը տարբերին Հիւգոյի գործերուն մէջ գտնուող մենախօսութիւններէն։

Իր սկսնակութեան օրերէն Տիւմա այս դրութեան հետեւեցաւ. Տիան տը Լիսն՝ որ իր առաջին գործերէն մէկն է, այդ հանգամանքը ունի ծայրէ ի ծայր, նոյն իսկ չա՛տ աւելի իր վերջին գործերէն՝ լ'Էրոանմեռէն և Գամէլիազարդ Տիկինէն։ Այս նկատումով է որ Բօմէտի Ֆրանսէզ իր խաղացանկին մէջ անցուցեր է Տիւմայի այդ առաջին խաղը, Տիան տը Լիսը, որ հակառակ Ֆրանսացի վարպետին լաւագոյն խաղերէն մէկը չըլլալուն, կրկին ա հագին յաջողութիւն գտեր է այս օրերս, իր առաջին ներկայացման պահուն։

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«ՌԱՖԱԷԼ»Ի

ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լամարթինի «Ռաֆայէլը», պղատոնական սիրոյ այդ գողտրիկ վէպը, վերջին երկու տարիներուն երկու թարգմանութիւն ունեցաւ Օսմաներէն լեզուով։ Առաջին թարգմանութիւնը՝ զոր ըրած է Նուրի Շէյտա, ի լոյս ընծայուած է Իքդամի տպարանէն. իսկ կրկրորդը՝ Մաիւմաքի տպարանէն։ Այս վերջինին թարգմանութիւնը կատարած են Միւսթէճապիզատէ Ըմէթ պէյ և Իսկէնտէր Ֆրէրի։ Երկու թարգմանութիւններն ալ ուշի ուշով կարդալու առիթը ունեցանք՝ ֆրանսերէն բնագիրը միշտ աչքի առջեւ ունենալով։ Լաւագոյն թարգմանութիւն մը՝ բնագրին և փոխադրուելիք լեզուներուն քաջ հմուտ ըլլալով միայն կարելի է, և երբ սոյն երկու առաւելութիւններէն անմասն չէ թարգմանիչը, արդիւնքը տարակոյս չկայ, եթէ ոչ ամբողջապէս, գէթ մեծ մասամբ հմարժէք կ'ըլլայ բնագրին ոգիին ու գրական ճաշակին։ Անուրանալի է թէ լեզուները մէկզմէկէ ո՛րքան ալ աւելի ճոխ ու ճկուն ըլլան, միշտ օտար հեղինակութեան մը իւրացման մասին նոյն դիւրութիւնները չեն կրնար վայելել, և հետեւաբար թարգմանութիւն մը հրապարակ հանուած ժամանակ, — սոսկ քննադատի դերը առած ըլլալու համար — յախուռն դատումով մը քննադատելը իմաստակութեան գործ է՝ ըստ այնմ թէ «la critique est facile, mais l'Art est difficile»։ Թարգմանութիւն մը կանոնաւոր ըլլալու համար թարգմանիչը ինչպէս ըսուեցաւ, նախապէս հեղինակութեան ոգին, լեզուական ու գրական ուղղութիւնները ուսումնասիրելով հանդերձ՝ իր լեզուին գրական ընդունակութեանցն ալ խորապէս գիտակ ըլլալու է։ Ռաֆայէլի երկու թարգմանութիւնները — եթէ ոչ թուրք դպրութեան հայեցակէտով— գէթ իմաստի փոխադրութեան մասին ընդհանրապէս իրարու նման են. երկուքն ալ հեղինակին սիրան ու հոգին, անոր քերթողական վերացումները պատկերացնելու ճիգ մը ցոյց տուած են. բայց եթէ մասնաւոր ուշադրութեամբ մը քննենք զանոնք՝ ընդհանուր գիծերու մէջ ունեցած նմանութիւններն մէկդի թողլով, պիտի տեսնենք որ Իքդամի լոյս ընծայածին մէջ տեղ տեղ բնագրին իմաստը նսեմացնելու աստիճան սեղմուած ու երբեմն ալ մանուածապատ տողեր կան, ինչ որ ենթադրել կուտայ թէ թարգմանիչը վէպին լեզուն պահանջուած կերպով չէ ըմբռնած, և կամ թուրք գրագէտներէն ոմանց գրագիտական քմայքներուն մէջ ինքն ալ իր կարգին ուզած է իյնալ։ Մաիւմաքի տպարանէն ելածը՝ եթէ ոչ բառական ճշդութեամբ, ինչ որ միւսին մէջ աշխատուած կը թուի, գէթ աւելի հաւատարիմ ըլլալու հանգամանքը ունի։ Իմաստի ճշդութենէն յետոյ, թարգմանութեան մը մէջ՝ ոչ նուազ ուշադրութեան առարկայ պէտք է ըլլայ լեզուին առանձնայատուկ ձեւը, զոր օսմաներէնը շիվրի կ'անուանէ Սատի լեզուէն փոխառնելով։ Առաջինին մէջ լեզուական ուղղութիւնը արդի ըլլալով հանդերձ՝ տեղ տեղ օսմանեան հին գրականութեան աղդեցութիւնը կը նշմարուի, արդիւնք տեսակ մը գրական առհաւութեան. զոր օրինակ «ասվաթը լաֆութիին եաբլրլարը լիսանէ ակեահ օլարտի» (Իթալիա) չամարը-նըն եթեաթրնսան «Fibres» նուփուզ իտէն ռիեանը ռէռեանրն էրնին հէվափսնին՝ վէ եպաos սեռնիհատի պալինի խապ օլուլ խմինի սէօյլէմէք իսթէմէտիյի նէվճիվանը բուեսաբնտա կէօրէն սէր կէնճ գըզըն էնիթսը լաթիֆէսինի նօթայա չէքէճէք...փտի.» Եայլն, և սոսր նման ձեւաւոր տողերու մէջ աւելի «Տէլէմաքի»ներուն նմանողութիւնը կը նշմարուի քան այն նորութիւնը երբ երկրորդ թարգմանութեան. «Մուսիգիչինաս օ. տարեալ տօնական կերպարանք է ստանում։ Զինուորական երաժիշտների խումբը ամբողջ օրը նուագում է այդ տեղ։ Ռուս ծառայող դասակարգը իրեն ազատ ժամերը գիտէ ուրախ անցկացնել։

Կարսում կայ երկու կլուբ, զինուորական և հասարակական. վերջինի անդամները նոյնպէս մեծ մասամբ զինուորական են, որովհետեւ տեղական ազգաբանակութիւնը, մեծ մասամբ Թուրքերից և Հայերից բաղկացած, սովորութիւն չունի այդպիսի տեղեր յաճախել։

Ռուսական և հայկական ներկայացումներ անընդհատ անպակաս են լինում Կարսում, շնորհիւ տեղական թատերասէրների և եկեւոր դերասանական խմբերի, որոնք ամառը պտտում են գաւառներում և միշտ լաւ յաջողութիւն են ունենում այդ քաղաքում։

Առաջ քան թէ դուրս կու գայինք քաղաքից. թող ընթերցողը ներէ ինձ ներկայացնել նաեւ մի հետաքրքիր և բացառիկ տիպ, որի մասին ինչ կարծիք ուզում է թող կազմի ընթերցողը. դա արդէն իր գործն է։

Սերգեյ Լազրիչը 40ի մօտ մի մարդ է, փոքրիկ հասակով և հիւանդոտ դէմքով, ծառայում է տեղական պաշտօնատներից մէկում, որպէս գրագիր, և ստանում է ամսական 25 ռուբլի ռօխկի կարծեմ։

ԱՐԵՎ. ԱՊՐԻՍԵԱՆՑ

(Շարունակելի)

—)(2)(—

ԿԱՐՍԻՑ — ՄՈՍԿՎԱՅ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այդպիսի հին քահանաներից, որոնք մնացել էին մեզ ժառանգութիւն հնուց՝ կար և Տ. Զորաբաբելը, որ նոյնպէս մեռել է մի տարի առաջ. դա մի փոքրիկ մարդ էր, չափազանց կարճ հասակով և խզուած ձայնով։

Տէր Յակոբը պատմում է որ Աղուանեան բռնում էր նրան, սղմում էր պատին և սկսում էր թակել մէջքին։ Մեղմ Տ. Զորաբաբելը որպէս մի հաւ այդ յաղթանդամ մարդու ձեռքին, հնարաւորութիւն չունենալով մի բառ անելու, դլուխը հանում է եղել առաջնորդարանի պատուհանից և մէջքին տեղացող բռունցքների հարուածների տակ աղիողորմ բզաւում.

«Հասէք, քրիստոնեանե՛ր. ո՛վ կայ, հասէք... մեռա՛յ... սպաննեցի՛ն...»։

Բայց քրիստոնեաները սովոր են եղել այդ տեսարաններին, և խեղճ տէրտէրը մինչեւ մեռնիլը մի երկու տարի դոնէ ազատ չուներ քաշեց երբ Աղուանեան եպիսկոպոսը փոխուեցաւ Կարսից։

Կարսի քահանաների մէջ կայ մէկը, որ կարծեմ նորերս գնաց էչմիածին վարդապետ ձեռնադրուելու. Տ. Մինաս Տէր Պետրոսեան, մէկը մեր արժանաւոր հոգեւորականներից և մեր գրականական հմուտ արժանաւոր աշխատաւորներից։ Որպէս հմուտ գրաբարագէտ, նա թարգմանած և տպագրել տուած ունի մի քանիսը մեր հին մատենագիրներից։ Եւ եթէ նա այսօր չի շարունակում իր գործը, նրա համար գլխաւորապէս որ միջոց չունի նրանց հրատարակելու. իսկ մասնաւոր մարդիկ այդպիսի շատ քիչ տարածուող և մասնագէտներին միայն հետաքրքրող գրքեր դժուարութեամբ են յանձն առնում տպագրել։

Էչմիածնում խոստացած են եղել նրա թարգմանութիւնները տպագրել, բայց որպէս ասել է էչմիածնի բարձր հոգեւորականներից մէկը. «Բանի փարայի կ'առնեմ էչմիածնի այդ խոստումները»։

Բաւականին լաւ դիպ է նաեւ Տ. Յակոբը, մէկը նոյնպէս հնուց մնացած քահանաներից։ Մէջակ կրթութեան տէր, նա բաւականին սիրուած է իր ժողովրդից, իր պարզ, բարեսիրտ և մատչելի բնաւորութեանը համար։ Կարսի հոգեւոր կառավարութեան անդամն է։ Ունի երկու որդիներ որոնցից մէկը աւարտել է Պետերբուրգի ուսուցչական սեմինարիան և աւագ ուսուցիչ է Կարսի կառավարչական դպրոցում. իսկ միւսը ունի գիւղատնտեսական դպրոցի դասընթացք և պէտք է կարծեմ քահանայ ձեռնադրուի։

Իր բաւականին լաւ յատկութիւնների հետ, Տ. Յակոբը ունի և ուրախ բնաւորութիւն։ Ինք անչափ հետաքրքրութիւն էր պատճառում երբ Տէր Հայրը պատմում էր դէպքեր Աղուանեան եպիսկոպոսի կեանքից, որից մի միայն ինքը չէր քաշվում վախենում։

—Սրբազանը—պատմում է նա — որքան անողորմ կերպով գիտեր ծեծել վանականներին, ինքը միեւնոյն ժամանակ սաստիկ երկչոտն էր երբ պատահում էր իրենից աւելի զօրեղներին։ Մի անգամ—աւելացրեց Տ. Յակոբը—գնացել էինք Սրբազանի հետ Բաթում, որը Կարսի թեմն էր կազմում այն ժամանակ։ Տեղաւորուելով եկեղեցու սենեակներից մէկի մէջ, մենք մի ժամից յետոյ գրեթէ պաշարուած էինք ծխականներով, որոնք կամ խնդիրներ էին բերում, և կամ գալիս էին գանգատելու իրենց քահանայ Տ. Կոստանդինից կամ, ինչպէս սովորութիւն էր նրան կանչել, «Տէր Կոտէլից»։ Երեկոյան թէյի ժամանակ արդէն այդպիսի մի քանի գանգատաւոր շարուած էին Սրբազանի մօտ, սենեակի շրջապատի ամբողջ երկարութեամբ։ Նստած էր և Տ. Կոստէն որ հանդիստ կերպով լսում էր մեղադրողներին, առանց մի խօսք արտասանելու։

Երբ գանգատաւորները վերջացրին իրենց ասելիքները, Սրբազանը բարկացած դառնալով Տ. Կոստանդինին, «Լչտէ, Տ. Կոստանդին — ասեց — ի՞նչ ունիս ասելիք»։

Առանց խօսելու — պատմում է Տ. Յակոբը — Տ. Կոստանդինը վեր կացաւ տեղից, վերարկուն հանեց, թեւերը վեր քաշեց և զարմանքից բերանը բաց Սրբազանի առաջ, սկսեց մի փառաւոր մուշտեկուիւ նստողների հետ. բարձրացաւ աղմուկ. բոլորը իրար էին խառնվել. բռունցք էր որ հասնում էր պատահողի քիթին ու պառնդին։ Աղուանեան բարձրացել էր մի հին բուխարու մէջ և սիրթնած։

—Անիծեալ, ինչ կ'ընես, ինչ կ'ընես անիծեալ, գոռում էր։

Երբ կռիւը հանդարտեց և ծխականները գնացին իրենց տեղերը, դիւերը պատուհանից խնդրագիրներ էր որ տալիս էին։ Դեռ առաւօտը չէր լուսացել, որ լսեցի Սրբազանի ձայնը.

—Տ. Յակոբ —կանչում էր —հայտէ, հայտէ ել երթանք քանի այս անիծեալը մեզ էլ չի ծեծել...։

Եւ մենք հեռացանք Բաթումից — աւելացնում է Տ. Յակոբը — տրուած բոլոր խնդրագիրները պատռելով։

Միւս երկու քահանաները նոյնպէս մնացած են հին ժամանակից. նրանցից մէկը հրաժարվել է քահանայագործութիւնից և ապրում է իր որդուց աշխատանքով։ Եղիշէ վարդապետի ժամանակ փորձեր եղան մի քանի նոր քահանաներ ձեռնադրելու. սակայն յաջորդը անպայման մերժեց, թողնելով որ հարկաւոր դէպքերում ծխականները իրենք ընտրեն իրենց քահանայուն, որը անպատճառ որոշ կրթական ցեղնդ պէտք է ունենայ. բացի այդ, եղածների թիւը բաւարար էր եւ հարկ չկար նրան աւելացնելու նորից։

Կարսի շրջականերում ընկնող հայ գիւղերը ըստ մեծի մասամբ աղքատ են, եւ պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ և սայլապանութեամբ։ Նրանց հետ խառն ապրում են մեծ թուով ռուս աղանդաւորներ, որոնց մայր երկրից քշեր են այդ կողմերը կառավարութեան կարգադրութեամբ։

Ձմեռը երբ «Կարս չայը» սառում է բոլորովին, գետը ահագին տարածութեան վրայ մաքրում են և տեղական զինուորականներ, սպաներ, իրենց կանանցով և երեխաներով երկաթէ ջմուչկներ հագած սահում են սառուցի վրայով։ Կիրակի օրեր մանաւանդ, գետի ափը կատարեալ տօնական կերպարանք է ստանում։ Զինուորական երաժիշտների խումբը ամբողջ օրը նուագում է այդ տեղ։ Ռուս ծառայող դասակարգը իրեն ազատ ժամերը գիտէ ուրախ անցկացնել։

Կարսում կայ երկու կլուբ, զինուորական և հասարակական. վերջինի անդամները նոյնպէս մեծ մասամբ զինուորական են, որովհետեւ տեղական ազգաբանակութիւնը, մեծ մասամբ Թուրքերից և Հայերից բաղկացած, սովորութիւն չունի այդպիսի տեղեր յաճախել։

Ռուսական և հայկական ներկայացումներ անընդհատ անպակաս են լինում Կարսում, շնորհիւ տեղական թատերասէրների և եկեւոր դերասանական խմբերի, որոնք ամառը պտտում են գաւառներում և միշտ լաւ յաջողութիւն են ունենում այդ քաղաքում։

Առաջ քան թէ դուրս կու գայինք քաղաքից. թող ընթերցողը ներէ ինձ ներկայացնել նաեւ մի հետաքրքիր և բացառիկ տիպ, որի մասին ինչ կարծիք ուզում է թող կազմի ընթերցողը. դա արդէն իր գործն է։

Սերգեյ Լազրիչը 40ի մօտ մի մարդ է, փոքրիկ հասակով և հիւանդոտ դէմքով, ծառայում է տեղական պաշտօնատներից մէկում, որպէս գրագիր, և ստանում է ամսական 25 ռուբլի ռօխկի կարծեմ։

ԱՐԵՎ. ԱՊՐԻՍԵԱՆՑ

(Շարունակելի)

ՓԱՐԱՁԱՅՆԱԿԱՆ

ՀԵՌՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԱԾՈՎՈՒՄՆԵՐ ՈՃՈՒՅԱՏՈՒ

ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՎԱՅԵՐԸ

Ֆրանսերեն գրքերի վաճառք Ալեքսանդրիայի մեջ։ Ֆրանսերեն գրքերի վաճառքի մասին Ալեքսանդրիայի մեջ գտնվող հանրագիտարանը հրատարակեց հետևյալ հայտարարությունը։ Ֆրանսերեն գրքերի վաճառքը դադարեցնելու մասին հրամանը ստացվեցավ Ֆրանսիայի կառավարության կողմից

սկան ջուր առնել, որով ռուսական շոգենաւը անմիջապէս Շէֆմի Փաշայի ծովեզերքը փութաց և հոն խրեցաւ։ Անգլիական ալ Հարէմ Իսկէնտիր առքեւ գընաց։ Այդ կերպով երկու շոգենաւերն ալ ազատեցան ընկղմելու անմիջական վտանգէն։ Նաւահանգիստի վերատեսչութեան կողմէ իսկոյն շոգենաւեր ղրկուեցան և արկածեալ շոգենաւերուն հարկ եղած օգնութիւնները ըրին։ Այդ շոգենաւերուն պատկանած գործակալները հեռագրով հրահանգ ուղած են իրենց կեդրոններէն որով տակաւին ազատման համար ոչ է գործողութիւն կատարուած չէ։

ՊՈԼՍՈՅ Ագսէրայ թաղին մէջ Գասիֆէմ Ալի, առքի օրը, դաշոյնը քաշելով սպառնալիք ըրաւ զինուորական բժիշկ Էսմէր էֆ.ի։ Ոստիկան մը ուզեց ձերբակալել. Ալի նախատական խօսքեր ըրաւ և ուզեց փախչիլ։ բայց վերջապէս ձերբակալուեցաւ։

ՍԿԻԽՏԱՐԻ մէջ Հասան Պասրի անուն մարդ մը, առքի օրը, գինովութեան հետեւանքով ինքզինքը վիրաւորեց, ղմելի մը մխելով կոկորդը։ Պասրի անմիջապէս հիւանդանոց տարուեցաւ։

ԽՈՒՎԵՐՈՒՆ.—Հարուստ կին մը որուն խլութիւնը և ականջներուն բզկիւնը բժշկուած էր Նիքօլսըն հաստատութեան արհեստական քիմբաններովը, այդ հաստատութեան նուիրած է 25,000 ֆր. որպէս զի այն բոլոր խուլերը որոնք միջոց չունին յիշեալ քիմբաններէն գնելու, կարենան ձրիաբար ստանալ։ Դիմել այդ հաստատութեան (Institut) հասցէին Congcott, Gunessbry, London W.

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Առաջիկայ մարտ 13ին (Ը. Ե.) Թէօթոնիայի սրահին մէջ պիտի տրուի փայլուն նուագահանդէս մը՝ ծանօթ Սորբաւօ Տիկին Ֆրիտա Ռէօհլէր-Կրիւցմախերի և Թաւլութակահար Տիրան պէյ Ալէքսանեանի կողմէ, մասնակցութեամբ Մաէսթրօ Պ. Վ. Ռատէլիայի։

Ահաւասիկ յայտագիրը.

Ա. մաս

1. Concerto pour Violoncelle (Ré maj.), op. 45. (B. Molique). a) andante, b) allegro.

2. Récitatif et air d'«Alessandro Stradella». (F. V. Flotow).

3. Sonate (en Sol) pour Piano et Violoncelle. (V. Radeglia).
Allegro moderato—andante mosso—allegro

4. Lieder . . . a) Intermezzo (R. Schumann). b) Es blinkt der Taü (A. Rubinstein). c) Inmitten des Balles (P. Tschaïkowski). d) Von ewiger Liebe (I. Brahms).

Բ. մաս

5. Soli de Violoncelle: a) adagio (W. A. Mozart). b) Rondo (L. Boccherini).
transcrits par Fr. Grützmacher

6. Lieder . . . a) Schliesse mir die aügen beide (K. Grammann). b) Berceuse (C. Chaminade). c) Pastorale (G. Bizet). d) Es liegt ein Traüme aüf der Haide (A. V. Fielitz).

7. Introduction et Polonaise brillante pour piano et violoncelle, op. 3. (F. Chopin).

Տոմսակները կը ծախուին Թէփէ Պաշի, Հաճորուլօ Խանին մէջ, Պ. Բ. Քէլէրի քով, ինչպէս նաեւ Թէօթոնիայի մէջ՝ նուագահանդէսին իրիկունը։

Գին կէս օսմ. ոսկի

ՏՐ. Գ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Վկայեալ Ցոռնսկաց կառավարութենէն

Հիւանդ կ'ընդունի իր տունը (Բերա, Էլէնի փողոց թիւ 5) ամէն օր կէս օրէն վերջ։ կէս օրէն առաջ կը գտնուի Պոլիս, Պահճէ Գաբու Մերճամէթճեան դեղարանը, ուր Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ձրիապէս կը խնամէ իրեն դիմող հիւանդները։

Կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ և կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ խնամքով։

544 2—10

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք Հայրը այսօր Պատրիարքարան չպիտի իջնէ և իր բնակարանին մէջ պիտի աշխատի։

—Էրզրումի առաջն. տեղապահ Տ. Զաւէն Ծ.Վարդապետ, տեղւոյն ազգային-ներէ ոմանց օրթոտոքսութեան յարելուն պատճառները և այդ մասին իր ձեռքառած միջոցները կրկին տեղեկագիրներով յայտնած է Ս. Պատրիարք Հօր։

—Ցառաջիկայ ուրբաթ օր Քաղ. Ժողով պիտի գումարուի Ղալաթիոյ Խորհրդարանը, Ս. Պատրիարք հօր նախագահութեամբ։

—Ակալալաքի երկրաշարժէն մնասուած ազգայնոց 5000 բուբլի նուիրեր են Միրզոեվ և ընկ., 5000 բուբլի Ա. Մանթաշեան, 150 բուբլի Թիֆլիսի հայ հոգեւորականութիւնը. ռուսահայ թերթ մը հանգանակեր է 21,240 բուբլի։

—Բազմավեպի խմբագրութիւնն ալ իր կողմէ 400 ֆրանք նուիրեր է Ակալալաքի երկրաշարժէն արկածեալ հայերու։

—Գուրկաղի Թաղ. Խորհուրդին կողմէ Պատրիարքարան ղրկուած գրութիւն մը կը յայտնէ թէ Գուրկաղի մէջ 7-800 կայ գաղթականներ կան հացակարօտ վիճակի մէջ։ Թաղ. Խորհուրդը թէեւ յաջողած է աղքատախնամ մարմին մը կազմել իր հսկողութեան ներքեւ որ օրական 80-100 օխա հաց կը բաժնէ այդ կարօտեալներուն ինչպէս նաեւ ձրի ածուխ, բժիշկ, դեղ կը մատակարարէ, սակայն ձեռք առնուած այս միջոցները անբաւական եղած են հացակարօտ ժողովրդեան արգահատելի վիճակը մեղմելու և թէ Թաղ. խորհուրդը այլ եւս այդքանն ալ ընելու անկարող վիճակի մէջ կը գտնուի, որ և է հասոյթ չունենալուն պատճառաւ. յիշեալ Թաղ. Խորհուրդը ի վերջոյ կը խնդրէ Ս. Պատրիարք Հօրմէն որ այդ խեղճերը իրենց ծննդավայրները ղրկելու համար հարկ եղած դիմումը ըլայ, որովհետեւ ամէնէն ալ անխտիր անգործ մնացած են և կը բաղձան վերադառնալ իրենց ծննդավայրերը։ Ս. Պատրիարք հայրը Գուրկաղի Թաղ. խորհուրդին ցոյց տուած այն մարդասիրութիւնը ամէն գովեստի վեր նկատելով, որոշած է քաջալերական գրով մը իր գոհունակութիւնը յայտնել և միւս կողմէ հարկ եղած դիմումը ընել։

—Հետեւեալ նուիրատուութիւններու լուրերը կը հաղորդէ Բազմավեպ իր վերջին թիւին մէջ.—Ժ. Լալայեան 4000 բուբլի նուիրեր է Տփխիսի Մխիթարեան հիւանդանոցին։ Հանգուցեալ ռուսահայ Միքայէլ Սափարեանց՝ Ներսէսեան դպրոցին կտակեր է 3000 բուբլի և 1000 բուբլի ալ նոյն վարժարանի ուսուցիչներուն թոշակի արկղին։ Բուտպայեան եղբայրները 100 բուբլի նուիրեր են չքաւոր հայ համալսարանական ուսանողներու։ Միլիոնատէր հանգուցեալ Շուշէցի Թ. Թամիրեանցի հարստութենէն իր բարեկամները կտակեր են 3000 բուբլի Շուշիի թեմական դպրոցին, 1000 բուբլի բէալական դպրոցին, Մարինսկի օրիորդաց և ուրիշ ուսումնարանի մը 500 ական բուբլի և Բաղուի մանուկներու Խնամատար Ընկերութեան 1000 բուբլի։ Հանգուցեալը ժամանակին Պարսկաստանի Արամեան ընկերութեան ալ 10,000 բուբլի առաքած էր, որպէս զի իր յիշատակին վարժարան մը բացուի։

—Սիլիվրիէն կը գրեն մեզ. «Սիլիվրի Պոլսոյ և Ռոտոսթոյի միջեւ փոքրիկ նաւահանգիստ մըն է բաւական բանուկ առեւտուրով։ հայ ազգաբնակութիւնը 180 տունի չափ կը հաշուուի. ունի երկսեռ վարժարան մը բաւական լաւ վիճակի մէջ. ունի եկեղեցի մը Ս. Գէորգ անունով։ Հայերը առհասարակ երկրագործութեամբ կը զբաղին, քսանի չափ ալ արհեստաւորներ կան։ Քահանայ մը ունէինք որմէ ժողովուրդը անհունապէս գոհ էր. խըղճամիտ ու պաշտօնին գիտակից եկեղեցական մըն էր Տ. Ներսէս Նշանեան. հիմայ անձնական տկարութեանը պատճառաւ ստիպուած է թողուլ իր հօրը ու հեռանալ քաղաքէս, զգալի պարապ մը թողլով։ Զորս ամիսէ ի վեր Ռոտոսթոյի Ս. Առաջնորդ Հօր մասնաւոր կարգադրութեամբ, նոյն քաղաքէն քահանաներ փոխն ի փոխ կ'այցելեն մեր քաղաքը, ժողովուրդին հոգեւորական պէտքերը գոհացնելու համար։ Վերջերս Սիլիվրիցիներու փափագին համաձայն, տեղւոյս երեւելիներէն Զաքարիա էֆ. Փափազեան Ռոտոսթօ երթալով յաջողեցաւ արժանաւոր քահանայացու մը գտնել յանձին Պ. Գրիգոր Ճամճեանի։ Ունինք երկսեռ նախակրթարան մը, 120-130 երկսեռ ուսանողներով. ասկէ առաջ Սարգիս էֆ. Սրենց և Մ. Մալաքեան էֆ. յաջորդաբար մէյ մէկ տարի պաշտօնավարեցին սոյն վարժարանին մէջ, գրեթէ անձնուիրաբար։ Իրենց օրով վարժարանիս աւելի փայլուն վիճակ մը ունեցած է և աւելի զգացուած է ուսման կարեւորութիւնը։»

—Բազմավեպի վերջին թիւին մէջ կը կարդանք թէ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Աւքսենտիոս Վ. Գուրգենեան վախճաներ է փետր. Ղին Վենետիկի մէջ։ Հանգուցեալ վարդապետը Մխիթարեան միաբանութեան ներքին անդամներէն էր, ու խմբագիրը Բազմավեպին՝ որուն կ'աշխատակցէր գլխաւորաբար իր թարգմանութիւններով։ Շատ հմուտ էր հայերէնի և իր թարգմանութիւնները լաւագոյն հրատարակութիւններ պիտի մնան միշտ։ Բազմավեպն համար աշխատած է ամէնէն աւելի. առաջին թիւէն իսկ՝ (1843) կ'աշխատակցէր անոր. ինքն է որ ընական գիտութեանց մեծ զարկ տուաւ այդ հանդէսին մէջ։ Իր թարգմանութիւններուն և հեղինակութեանց թիւը քսանը կ'անցնի։ Վանքին մէջ լաւ ուսուցիչ մը եղած է, ինչպէս նաեւ Բարիզի Մուրատեան վարժարանին ու Պոլսոյ մէջ ալ։ Միաբանութեան գործերուն համար մինչեւ Հնդկաստան ճամբորդած է ու Պոլսոյ մէջ սաբաւական մնացած է վանական պաշտօններով, արժանանալով Մէհիթարի պատուանշանին։ Իր կեանքին վերջին երեք տարիները անցուցած է վանքին մէջ, տառապելով հիւանդութենէ մը՝ որ վերջի վերջոյ գերեզման առաջնորդեց զինքը, խոր սուգի մէջ թողլով բովանդակ Մխիթարեան Միաբանութիւնը։

Հեռագիր

ԱՅՍՕՐՈՒԱՆ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԹՐԱՆՍՎԱԱԼ

ԼՈՆՏՈՆ, 5 մարտ.— Պոէրները կ'ամբաստանեն Բրէթորիան՝ Անգլիացիներու կողմէ պաշարումէ մը վախնալով։

—Քրիւկէր նախագահը Քրոնեէ զօրավարին անձնատուութենէն ետքը խորհրդակցեցաւ Օռանժի զօրավարներուն հետ, անոնց մտադրութիւնները իմանալու համար։ Զօրավարները, իրենց անկախութիւնը պաշտպանելէ չհրաժարելով հանդերձ, որոշեցին որ եթէ իրենց զինուորները ետ մղուին, Թրանսվալցիներուն պիտի միանան, Թրանսվալի մէջ յուսահատ դիմադրութիւն մը ընելու համար։

—Ո եւ է տեղեկութիւն չկայ այն յարձակումին վրայ զոր Պրապանթ զօրավարը Պոէրներուն վրայ կատարեց Ճէյմսթաունի մէջ։

ԲԵԳԵՐՍՊՈՐԻԳ.— Ռուս լրագիրներէն շատերը կը պնդեն որ ցամաքային Եւրոպայի տէրութիւնները միջամտեն հարաւային Ափրիկէի պատերազմին։

ԼՈՆՏՈՆ.— Բէլէնց զօրավարին յառաջապահները գրաւեցին Աչթերթանկը։

—Երեսփ. Ժողովին մէջ ելմտական նախարար Սըր Մ. Հիքս Պիչ ճառ մը խօսեցաւ Անգլիոյ ելմտական կացութեանը վրայ։ Ըսաւ թէ ներկայ տարեշրջանին համար 43 միլիոն անգլիական ոսկիի բաց մը կայ։ Նախարարը առաջարկեց մասնաւոր փոխառութիւն մը կնքել 35 միլիոն անգլիական ոսկիի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

ՕՌԱՆԺ ՌԻՎԷՐ, 1 մարտ.— Քրոնեէ զօրավարը ու կինը առջի դիշերը հոս անցուցին։ Զգուշական խիստ միջոցներ ձեռք առնուած էին, որպէս զի հանրութիւնը չտեսնէ Քրոնեէ զօրավարը։ Սպաներն իսկ արտօնուած չէին կայարանին մէջ մնալու։ Կայարանին սպասման սրահը գոցուած էր կառախումբին ժամանումէն առաջ։ Քրոնեէ զօրավարը ընկճուած կ'երեւայ։ Իր կնոջ, թոռանը, թարգմանին ու թիկնապահներուն հետ կայարանին ճաշասրահը գնաց։ Բրիթիման զօրավարն ալ անոր կ'ընկերանար։ Ճաշի սկսելէ առաջ Քրոնեէ զօրավարը ձեռքերովը երեսը գոցեց և աղօթեց։ Օռանժէն Քրոնեէ զօրավարը՝ Բրիթիման զօրավարին հետ՝ դէպի Բարեյուսոյ Գլուխը ճամբայ ելաւ։ Թէ՛ Քրոնեէ զօրավարը և թէ միւս պէրէ սպաները անգլիական յատուկ վագոնի մը մէջ վար պիտի դրուին։

—Լորտ Ռոպէրթս ու Լորտ Քիչէնէր, որոնք անցեալ հինգշաբթի Բիմպրլի հասած էին, մեծ խանդավառութեամբ ընդունուեցան։ Քաղաքապետութեան Խորհուրդին անդամները բարի գալուստ մաղթեցին Լորտ Ռոպէրթսի, որ պատասխանեց՝ գոհունակութիւն յայտնելով քաղաքին օգտակար եղած ըլլալուն համար։ Մառէշալը յարեց թէ ուզած էր այցելութիւն մը տալ Բիմպրլիի և թէ հետեւեալ օրը պիտի մեկնէր։ Լորտ Ռոպէրթս ու Լորտ Քիչէնէր հիւրընկալուեցան Պ. Էպիլ Ռոտսի կողմէ։

—Պէրլինէն կը հեռագրեն Տէպպի թէ Գերմանիոյ կայսր կողմէ Անգլիոյ թագուհիին ուղղուած շնորհաւորական հեռագիրը քաղաքական հանգամանք մը չունի և չի կրնար ս և է հետեւանք ունենալ, թէ ընտանեկան զգացումներէ ներշնչուած է և թէ թոռն է որ կը հեռագրէ իր մեծ մօրը։

ԼԷՏԻՍՄԻԹԻ ԱԶԱՏՈՒՄԸ

Լոնտոնէն մարտ 2 թուականով կը հեռագրեն.—Թուկէլլայի մէջ ամէնէն վերջին ճակատամարտը կատարուելէ ետքը, արեւամուտին, երբ հաստատուեցաւ թէ Պոէրները նահանջած են, էմբէրիալ զօրագունդէն երեք հարիւր հետեւակներ ճամբայ ելան դէպ ի Լէտիսմիթ։ Հակառակ կողմէն ոչ ոք կար անոնց դէմը ելլող։ Այդ զինուորները երբ քաղաք ժամանեցին, ընդունեցան պաշտօնաներու կողմէ, այնչափ ուրախութեամբ զոր կարելի չէ նկարագրել։ Բոլոր սպաները, զինուորները ու ժողովուրդը վազելով դիմաւորեցին զիրենք ազատողները։ Կիներ ալ կային զաւակներն գրկած և կ'արտասուէին իրենց ուրախութենէն։ Տեսարանը շատ յուզիչ էր. այրերն ալ կուլային։ Հակառակը մը կը կազմէր պաշարուածներուն տկար վիճակը և ազատողներուն քաջառողջութիւնը։ Հուսալի իր սպաներով քաղաքին կեդրոնը կը սպասէր։ Երբ ազատող զինուորները հասան, Հուսալի զօրավարը ողջունեցին համակրական ցոյցերով։ Զօրավարը շնորհակալութիւն յայտնեց իր զինուորներուն՝ իրենց դիմադրութեանը համար։

—Ենթանգիծանի տէրը Պ. Ռոշֆոռ մինչեւ հիմա 3,764 ֆր. հաւաքած է Քրոնեէ զօրավարին նուիրուելիք պատուոյ սուրին համար։

—Վիքթորիա թագուհին Լէտիսմիթի ազատման լուրը առնելուն պէս շնորհաւորական հեռագիրներ ուղղեց Սըր Ռըվէրս Պիլլերի և Հուսալի զօրավարին։ Կալլէսի իշխանն ալ հեռագրով շնորհաւորեց Սըր Ռըվէրս Պիլլերը։ Այդ երկու զօրավարներուն կիները լրագիրներուն միջոցաւ շնորհակալութիւն յայտնեցին իրենց ուղղուած շնորհաւորական հեռագիրներուն համար։ Սաուիթ-Քիսնկիթնի ուսանողները համակրական ցոյցեր ըրին։ Հայտ-Բարքի մէջ թագուհոյն ամուսնոյն Սպէրթի իշխանին յիշատակարանին շուրջը հաւաքուելով Անգլիոյ ազգային երգը երգեցին։ Անկէ գացին Պ. Զէմպլէնի բնակարանին առջեւ, բայց նախարարը բացակայ էր. Պ. Զէմպլէնի որդին պատասխանեց անոնց։ Ուսանողները յետոյ գացին Պատէն-Բուէլ գնդապետին բնակարանին, Ուէլինկթընի արձանին և Լէտի Հուսալթի բնակարանները առջեւ։ Ուսանողները երբ ֆրանսական դեսպանատան առջեւէն կ'անցնէին, երգերը դադրեցուցին և քիչ անդին վերսկան։

—Աւստրիոյ Կայսրն ալ շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Վիքթորիա թագուհիին՝ անգլիական վերջին յաջողութիւններուն համար։

—Լորտերու Ժողովին մէջ պատերազմական նախարար Լորտ Լանսդաուն ծանուցանելէ յետոյ թէ անմիջական ազէտքի վախերը փարատած են, յարեց.

«Իմացանք Լէտիսմիթի ազատումը։ Գոհութեամբ իմացանք թէ ազէտքը անհետացած է. սքանչացում յայտնեցինք այդ գործը յաջողցնողներուն համար։ Զեմ գիտեր թէ մեր սքանչացումը ո՛ր կողմ ուղղելու է։ Հուսալի զօրավարի՞ն ու զինուորներուն որոնք այնչափ քաջութեամբ դիմադրեցին, Սըր Ռըվէրս Պիլլերի զօրքերո՞ւն և կամ հարաւային Ափրիկէի անգլիական ընդհանուր հրամանատարի՞ն։ Աւելի պէտք է սքանչանանք Օռանժի երկիրը կատարուած ուժգին յարձակողականին, քան թէ Նաթալի մէջ գործուած ճնշումին։ Այդ երկու յաջողութիւնները պատճառ մը չեն որ թուլանք։ Մեր ջանքերը պիտի շնուռնին։ Մարտ 4ին աւարտող շաբթուան մէջ ութ շոգենաւեր ճամբայ պիտի ելլեն 4,700 զինուորով, մարտ 11ին հինգ շոգենաւեր՝ 11,800 հոգիով, 18ին՝ 11 շոգենաւ՝ 9800 հոգիով ու ապրիլ 1ին՝ վեց շոգենաւեր՝ 3200 հոգիով ամէնը 38,000 զինուոր։ 17800 հոգի ալ ճամբայ պիտի հանուին, բայց շոգենաւերը տակաւին պատրաստ չեն։»

ՍԱԿԱՐԱՆ

*Այսօր երկիւղնէ աւելի ինկած են գիները և Սակարաններու մէջ ալ շատ ոգեւորուած գործառնութիւններ չեն ըլլար. եղածներն ալ աւելի անկումի հակամէտ կ'երեւան։ Միայն անգլիական քոնսոլիտէն այսօր 13 սնդ. բարձր է. իսկ մնացեալ բոլոր թուղթերը թէ՛ օսմ. և թէ օտար, մէյմէկ քիչ ինկած են։ Այն զրոյցը թէ օսմ. քոնսոլիտէին 4ի տեղ 4.25 պիտի տրուի, և թէ երկաթուղիի արժէքթուղթերը պիտի կիսուին, բաժնուին և այլն, պարզ իբր զրոյց են եղեր-ինչ որ երէկ պաշտօնապէս հերքուեցաւ. և արդէն քանի մը տարի առաջ ալ ու նոյն իսկ տարի մը առաջ այս տեսակ զրոյցներ ելան, բայց միշտ հերքուեցան։ Արդարեւ ամէն ատեն գիները երբ կարեւոր տարբերութիւններ ունենան, այս տեսակ սակարանական զրոյցներ կ'ելլեն, որոնց շատ հաւատալու չէ։ Անցեալները երբ երկաթուղիի արժէթուղթերը մինչեւ 133 ֆր. եղած էին, այն ատեն ալ ըսուեցաւ և լրագիրներու մէջ ալ գրուեցաւ թէ մեծկակ խմբակ մը կազմուած է երկաթուղի գնելու համար և այլն։ Վերջէն տեսանք թէ մինչեւ 116 ֆր.ի ինկաւ։ Մենք կը կարծենք թէ՝ գիներու այս քանի մը օրուան անկումը նախընթաց շաբթուան կարեւոր բարձրացումներու մէկ յետադրջումն է, երբ մանաւանդ նկատի առնենք թէ երկու կարեւորագոյն Ռանդերու — օսմ. և անգլիական Քոնսոլիտէներու—կտրոնները զեղչուեցան։ Բայց գուցէ առարկուի թէ հապա միւս թուղթե՞ր։ Պէտք է գիտնալ թէ բոլոր առաջնակարգ թուղթեր քիչ շատ իրարմէ կ'ազդուին, այնպէս որ առաջնակարգ թուղթի մը անկումը առիթ կու տայ ուրիշի մը անկումին և փոխադարձաբար։

—Այս առաւօտ մեր քոնսոլիտէն բացուեցաւ 25 ղրշ. 15 ու կէս փր. և երկաթուղին 126 ֆր. մէկ քառորդ։ Բացումէն վերջ ինկան գիները, այնպէս որ լրագիրը մամուլը դրուած պահուն քոնսոլիտէն 25 ղրշ. 10 փր. և երկաթուղին 125 ֆր. ու կէս եղան։ Նոյնպէս Թրանսվալը՝ որ 63 ու կէս ֆր. բացուած էր, 61 ու կէս ֆր. եղաւ։

—Երէկ, 9 ու կէսի սթիլանցի զանգակին ատեն քոնսոլիտէն 25 ղրշ. 18ֆր. էր։

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնսոլիտէ Մեռի Դ.	Օ. Ո.	25	17
Ամէնէն բարձր գին	»	25	21 1/2
Ամէնէն վար գին	»	25	16
Բուլգարի Երկթ. զոց.	Ֆր.	127	—
Ամէնէն բարձր գին	»	127	50
Ամէնէն վար գին	»	126	87 1/2

ԲԱՑՈՒՄ 22 Փետր.

Օսմ. Քոնսոլիտէ Մեռի Դ.	Ֆ. Կ.	25	15 1/2
Բուլգարի Երկաթուղի	Ֆր.	126	37 1/2
Օսմանկէ		436	50
Դէպի		300	—
Օսմ. Պանքա		13	06
Քէտի ժէնէրալ ՕՔՔմ.		2	34
Ցօս. ՕՔ. Շանմ է Վալէօր	Ա. Ո.	0	08
Օսմ. Ապաճ. Ընկ.		4	17 1/2
Թրամուէյ բաժնեթ.		680	—
» Ժուիսանս		2:1	—
» պարտատ.	Ֆր.	482	—
Ցարսի Կ. Գոլոսս	»	475	—
Թրանսվալ	»	63	—

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

26 ֆրանկնոց	Ղրշ.	87	31
Անգլիական ոսկի	»	110	18
Ռոլ էմբէրթալ	»	90	
Քրիմից	»	51	09
Մէճիտիէ արծաթ	»	108	06
Մէճիտիէ	»	96	10
Բուլգի Ղոնգազրամ	Օ. Ո.	5	58

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	Ղրշ.	109	20
» » » չէք	»	110	10
Բարիզ » »	Ֆր.	22	92 1/4
» » » չէք	»	22	82 1/4
Գերմանիա անտոկոս չէք	Մարք	18	52
Վիեննա չէք	Ֆիորր.	21	83

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

ԼՈՆՏՈՆ, 5 Մարտ

Անգլիական Քոնսոլիտէ	100	43
Օսմանեան Ռանտ սէրի Դ.	23	75
Օսմանեան Պանքա	13	06
Հելլենական 5 %	39	50
Պուլկարական 1892	86	—
Էժիբսիէն լունիֆիէ	104	—
Զարթընցս	3	39
Ռանտ Մին	36	16
Ռիօ Թինթօ	53	06
Շանժ Բարիզ	25	43 3/4

ԲԱՐԻԶ, 5 Մարտ

Օսմ. Քոնս. սէրի Դ.) բաց.	Ղրշ.	24	05
) զոց.	»	24	05
» » » Բ.	»	47	87
» » » Գ.	»	27	50
Օսմանիէ	»	436	50
Բուլգի Երկաթուղի	Ֆր.	129	50
Օսմ. Ռէժի	»	300	—
Օսմ. Կայս. Պանքա	»	577	—
Ֆրանս. Ռանթ 3 %	»	102	—
Քէտի Լիոնէ	»	1135	
Իտալական Ռանթ	»	94	35
Սպանիական արտաքին	»	70	20
Թրանսվալ	»	65	—
Զէք Լոնտոնի վրայ	»	25	185
Դրամագլուխ	»	63	50
Զարթընցս		89	—

ՓԵՐԼԻՆ, 5 Մարտ

Ռուպլը	»	216	40
Բուլգի Երկաթուղի	»	113	40
Անատ. երկթ. պարտաթուղթ	»	—	—
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20	295

ՎԻԵՆՆԱ, 5 Մարտ

Փոխան. Լոնտոնի վրայ	»	242	50
Բուլգի Երկաթուղի	»	125	—
Օսմ. Ռէժի	»	144	—

ՊՐԻՍԼ, 5 Մարտ

Օսմ. Քոնս. սէրի Դ.		23	75
Բուլգի Երկաթուղի		117	50

Տ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՍԱՄՆԱԲՈՅԺ
396, Մեծ փողոց Բերա, 396
Տեսնել 4րդ երեսը

«ԴԵՂԱՐԱՆ ՆՈՐՄԱԼ»
192 ԲԵՐԱ ՄԵԾ-ՓՈՂՈՑ 192

Բերայի կեդրոնը, և «Սիթէ տը Բերա» չէնքին անկիւնը հաստատուող այս նոր դեղարանը որ դիղագործութեան արուեստին ամէն կատարելութիւններով օժտուած է, իր դեղերուն զտութեամբ, թարմութեամբ և դիւրամատչելի գիներով օգտակարապէս կը ներկայանայ կըբին հասարակութեան և իր վաղեմի յաճախորդաց։

Դեղարանին տէրը Հ. Էմիրզէեան քանի մը տարիներէ ի վեր ծանօթ է իր Կ. Պոլսոյ Սուլթան Մահմուտի Դամբարանին դիմաց ունեցած մեծ դեղարանովը զոր ամբողջովին ծախած և այս նորը հիմնած է։

Դեղարանին վրայ խորհրդակցութեան սենեակ մը յարգելի բժշկաց տրամադրութեան ներքեւ դրուած է և դեղարանը մինչեւ կէս գիշեր բաց է։

512 12—25

—)(12)(—

ՆԻՔՕԼ ՄԷՅՐԱ

ԿՌԱՊԱՇՏ ՀՆԴԻԿՆԵՐԸ

Ս. ՄԱՍ

ԼԱՔԱՆԷ ՍՆՏՈՒԿԸ

Զ.

ՈՒՐ ՎԵՐԶԱՊԷՍ ԿԸ ՀԱՍԿՑՈՒԻ ԹԷ ԻՆՉ ԷՐ ԵՐԷՑԻՆ ՆՈՊԱՏԱԿԸ

—Ժամէ մը երկու հազար տոլարները պիտի ստանաք, եթէ երբէք ուզածս ընէք. գիտցէք մանաւանդ որ ըսելիքս շատ պարզ բան մըն է և զայն գլուխ հանելու համար բնաւ դժուարութիւն չպիտի քաշէք։ Նաւուն քովը ի վար մակոյկ մը իջեցուած է. զոյգ մը թիւ պիտի դնէք անոր մէջ և պիտի թողուք որ մեկնիմ. ահա ա՛ս է ձեր բոլոր ընելիքը։

—Մակոյկով մեկնի՞լ, ըսաւ Ժօէ. բայց ո՞ւր կ'ուզէք երթալ։

—Ատիկա Ն. արժանապատուութեան գործն է, ընդմիջեց Քէննէտի. ու երբ բարեացակամութիւնը կ'ունենայ մեզի կանխիկ վճարելու, մենք ալ մեր կարգին բնաւ իրաւունք չենք ունենար իր գործերուն միջամտելու։

Ցետոյ երէցին դարձաւ և աւելցուց.

—Պայմանաւ սակայն որ մինակնիդ ճամբայ ելլէք ու բնաւ մեզմէ օգնութիւն չյուսաք։

—Շատ լաւ, մինակս ճամբայ կ'ելլեմ. ուրիշ առարկութիւն մը ունի՞ք։

Երկու նաւաստիները իրարու երես նայեցան։

Իրարու ակաղնի ի վար բաներ մը փսփսացին։

Ցետոյ, Քէննէտի ըսաւ բարձրաձայն.

—Գիշերը շատ մութ է և կայմին վրայ կեցող պահնորդը չի կրնար մեզ նշմարել։ Վաղը թող կռահն ձեր փախուստը. մենք ո՛և է կերպով չենք վտանգուիր։ Թիերն ալ կը իւղոտենք որպէս զի ձայն չհանեն, և ամէն բան կը կարգադրուի։ Ուրեմն խնդիրը կարգադրուած է, ո՞ր ժամուն կ'ուզէք որ թիերն ու զձեզ մակոյկ իջեցնենք... անշուշտ երկու հազար տոլարները ստացած ըլլալէ ետքը, չէ՞...։

—Բնականաբար, պատասխանեց երէցը, միայն թէ ուրիշ բան մըն ալ պիտի ըսեմ ձեզի։

Եւ բերանը անոնց մօտեցնելով, շա՛տ ցած ձայնով մը բաներ մը ըսաւ՝ որուն նաւաստիները մեծ ուշադրութեամբ ունկնդրեցին։

Երբոր երէցը խօսքը աւարտեց, Ժօէ ըսաւ.

—Օ՛հ, ատիկա խոշոր խնդիր մըն է, անանկ չէ՞ Քէննէտի։

Քէննէտի չպատասխանեց անդամ իր ընկերոջ, ու երէցին դառնալով ըսաւ.

—Այդ խնդիրը կրնանք քննել. միայն թէ պէտք է դիտել տամ որ ատիկա բընաւ առնչութիւն չունի առջի խնդրին, և կամ նախապէս խոստացուած 2000 տոլարին հետ։ Ցետոյ չա՛տ ալ վտանգաւոր գործ մըն է, ու եթէ երբէք բռնուիլնս ըլլանք, գլուխիս վրայ կու տանք առանց այլ և այլի։

—Պիտի վճարեմ, ըսաւ երէցը. որչա՞փ կ'ուզէք։

—Զորս հազար տոլար աւելի պատասխանեց Քէննէտի։

Ու տեսնելով որ երէցը հոգ չէր ընէր գումարին մեծութիւնը, աւելցուց.

—Անշուշտ մեզմէ իւրաքանչիւրին համար։

—Շատ աղէկ, կու տամ։

Ու խօսքը գործին միացնելով, գրպանէն պանքնոթներու ծրար մը հանեց, անկէ պէտք եղածը առաւ և տուաւ Քէննէտիի։

Այս վերջինը լաւ մը համրեց զանոնք և գումարին ճշդութիւնը հաստատելէ ետքը ըսաւ.

—Միայն թէ խնդիր մը կայ. կ'ըսէք որ ձէնթիմէնը խոր քունի մը մէջ թաղուած է. բայց իր ազիկը կայ. ա՛ն ինչ ընենք։

—Հոգ մի՛ ընէք, ըսաւ երէցը. ամէն գիշեր աս ատեն կամրջակին վրայ չըլլա-գայելու կ'ելլէ. ու ճիշդ տեսէ՛ք, ելած է արդէն։

Արդարեւ Տէպպօրան էր որ կամրջակին միւս կողմէն երեւցաւ և եղերքի երկաթէ ձողերուն կրթնելով սկսաւ ծովը դիտել։

—Ճիշդ գործելու ատենն է, ըսաւ երէցը։

—Բայց թողէք որ գէթ ծխամորճս վառեմ։

Ու գրպանէն երկար պատրոյգ մը հանելով կայծքարին վրայ դրաւ վառելու համար։

Բայց Քէննէտի չթողուց ըսելով.

—Հիմա ատենը չէ՛ լոյս հանելու։

Եւ պատրոյգը խլեց անոր ձեռքէն։

Երէցը ձեռքը երկնցուց և պատրոյգը բռնելով ըսաւ.

—Ի՛նչ աղուոր պատրոյգ. որչա՞փ ատեն կրնայ վառիլ ասիկա։

—Ժամ մը, պատասխանեց Ժօէ։

—Ան ատեն տոլար մը կու տամ ձեզի և ասիկա ինծի կը ձգէք։

—Ուզածնուդ պէս։

—Բա

ՖՈՍԹԱՐ

Ամերիկեան ապահովագրական ընկերութիւն

Նվիրատվեց էդ հատուած և էդ հոգը

Տնօրէն Թորգիսյան, Գնահատող Ամերիկայի Ս. Ազգային Ընդհանրական Ժողովոյ Խորհրդական (ՏԵՍԱԿԱՆ) Գրասենեակ՝ Ամերիկայի Ազգային Ընդհանրական Ժողովոյ Գանձապետ Ս. Ազգային Ընդհանրական Ժողովոյ Գանձապետ

Ի Կեղ մեծ ապահովագրելիք

Ապրիլ 20 տարեկիցական

Մեծագոյն ապահովագրելիք տարեկան ապահովագրելիք

(Ապրիլ 20 primes)

ԿԱՐԹԱԳԻՆ

Ամերիկեան ապահովագրական ընկերութիւն

Ամերիկեան ապահովագրական ընկերութիւն

Տարեկան ապահովագրական ընկերութիւն

Ամերիկեան ապահովագրական ընկերութիւն

Ամերիկեան ապահովագրական ընկերութիւն

Ամերիկե